## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի  Մ Ա Ր Զ Պ Ե Տ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«01» «փետրվարի» 2022թ N ԱՊ/68-2022

### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության 2022 թվականի աշխատանքային ծրագիրը՝ 2022 թվականի ձմռան ամիսներին տեղացած ձյան և գարնանային անձրևների հետևանքով հնարավոր հեղեղումներից և գետերի վարարումից մարզի բնակչության գույքը,գյուղատնտեսական հողատարածքները և ցանքատարածությունները պաշտպանելու, հեղեղումների անվտանգ անցկացումը ժամանակին և արդյունավետ կազմակերպելու, մարզում գետերի ու հեղեղատարների առավել վտանգավոր հատվածների հուների մաքրումն ու ափերի ամրացման միջոցառումների ու աշխատանքների ցանկը կազմելու նպատակով.

**Որոշում եմ.**

1. Ստեղծել աշխատանքային խումբ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբին /Ա. Այվազյան/՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին /համաձայնությամբ/:

3.Աշխատանքային խմբին /Ա..Այվազյան/՝ սույն որոշմամբ նախատեսված ուսումնասիրությունները և աշխատանքները ավարտել մինչև 2022 թվականի փետրվարի 22-ը և կատարման մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

01.02.2022

X

VERIFIED OCSP 01.02.2022 16:02:42 GMT+4

**Մարզպետ՝**

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

**Է.Հովհաննիսյան**

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության*
*Արմավիրի մարզպետի*
*2022 թվականի փետրվարի 01-ի*
*ՄՊ/68 N 2022 որոշման*

*Աշխատանքային խումբ*

*Խմբի ղեկավար՝*

Ա. Այվազյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

*Անդամներ՝-*

Մ. Սարիբեկյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ

Ս.Մխիթարյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

Գ.Մելիքյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ

Կ.Մարգարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի ավագ մասնագետ

Գլխավոր քարտուղար՝ Ա.Հովհաննիսյան

01.02.2022

X

VERIFIED OCSP 01.02.2022 13:51:39 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023